**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՎԻՎ/56/2020**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 01 հուլիսի 2020թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյան, Լ. Ալեքսանյան, Ա. Փաշինյան, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով),

2020թ. հուլիսի 1-ին քննելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանի (ներկայիս՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար) կողմից հայտարարագրման ենթակա տվյալները 2018 թվականի տարեկան հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ 2020 թվականի ապրիլի 6-ին հարուցված ՎԻՎ/56/2020 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

## ՊԱՐԶԵՑ

### I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1. Հանձնաժողովն, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին » ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով իրեն վերապահված գործառույթները, պարզել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի նախկին տեղակալ Զարուհի Բաթոյանի կողմից 2019թ. հունիսի 21-ին ներկայացրած գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց 2018 թվականի տարեկան հայտարարագրում «Հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» բաժնում Զ. Բաթոյանը առերևույթ չի հայտարարագրել իր եկամուտները, ինչի առնչությամբ

2020 թվականի ապրիլի 6-ին հարուցել է թիվ ՎԻՎ/56/2020 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Հանձնաժողովի 06.04.2020 թվականի թիվ ՎԻՎ/56/2020 որոշմամբ Զարուհի Բաթոյանին առաջարկվել է էլեկտրոնային եղանակով Հանձնաժողովի info@cpcarmenia.am էլեկտրոնային հասցեին ներկայացնել գրավոր բացատրություն՝ հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսի՝ COVID-19-ի տարածումը կանխարգելելու պետական միջոցառումների շրջանակներում փոստային եղանակով նամակների առաքման սահմանափակումները:

3. 15.04.2020թ. Զարուհի Բաթոյանը Հանձնաժողով է ներկայացրել թիվ ՎԻՎ/56/2020 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի առնչությամբ իր բացատրությունը:

## II. Զարուհի Բաթոյանի բացատրությունը.

4. Թիվ ՎԻՎ/56/2020 վարչական վարույթի մասնակից Զարուհի Բաթոյանը հայտնել է, որ իր կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացնելը՝ պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ի տարբերություն մյուս դաշտերի՝ եկամուտների վերաբերյալ դաշտը նշված չի եղել որպես պարտադիր լրացման ենթակա և համակարգը թույլ է տվել չլրացնել դրանք: Ուստի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացված հայտարարագրում իր եկամուտները չհայտարարագրելը խնդրել է դիտարկել որպես զուտ տեխնիկական բացթողում և թույլատրել 2018 թվականի տարեկան հայտարարագրում կատարել ուղղում՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» բաժնում նշել 7 515 233 ՀՀ դրամ:

## III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

5. Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ/56/2020 գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների քննություն, հաստատված է համարում, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի նախկին տեղակալ Զարուհի Բաթոյանի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց 2018 թվականի տարեկան հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» բաժնում Զ. Բաթոյանը անզգուշությամբ չի հայտարարագրել իր եկամուտները՝ թույլ տալով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված (հայտարարատուի կողմից

հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը) վարչական իրավախախտում:

6. Ինչ վերաբերում է վարույթի մասնակից Զ. Բաթոյանի կողմից նշված հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում համապատասխան դաշտի՝ լրացման համար ոչ պարտադիր լինելու հանգամանքին, ապա Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ 2019 թվականի դրությամբ հայտարարգրերի էլեկտրոնային համակագում հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրելիս բոլոր դաշտերը, առանց որևէ տարբերության, պարտադիր են եղել լրացման համար: Հայտարարատու անձը տվյալ բաժնում ընտրել է <<այո>> կամ <<ոչ>> հնարավոր տարբերակներից մեկը՝ <<այո>> տարբերակը ընտրելուց հետո բացվել են լրացման դաշտերը, իսկ եթե հայտարարատուի կողմից ընտրվել է <<ոչ>> տարբերակը, ապա, լրացման դաշտեր չեն բացվել: Տվյալ դեպքում, Զ. Բաթոյանի կողմից ընտրվել է <<ոչ>> տարբերակը, ինչը համակարգը համարել է պատասխան և հնարավորություն է տվել ավարտել և հանձնել հայտարարագիրը:

**IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը.**

7. Զարուհի Բաթոյանը «Հանրային ծառայության մասին» 2011թ. մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի ուժով(«Հանրային ծառայության մասին» 2018թ. մարտի 23-ի ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով) հանդիսանում է գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

8. «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն 26.05.2011թ. ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտարարատու պաշտոնատար անձի՝... հայտարարագրում լրացվում են հարկային տարում ստացված՝ նույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:

9. Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասին համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ** սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով

10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

11. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՝Հանձնաժողովը Օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

12. Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, 42-րդ հոդվածի 6-րդ մասով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 169.28-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.17-րդ հոդվածով, Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Զարուհի Բաթոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ** սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը բողոքարկելու դեպքում՝ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

3. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով)» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

4. Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում՝ բողոքն առանց բավարարման թողնելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում, այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Տուգանքը վճարելուց հետո Զարուհի Բաթոյանին տրամադրել 7 աշխատանքային օր՝ գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց 2018 թվականի տարեկան հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» բաժնում համապատասխան ուղղում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զարուհի Բաթոյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

7. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**